265-ԿՀ



ՆՈՐ-ՏԱՐԻ

«Անցանեն ժամք եւ աւուրք եւ ամք, եւ յա-
«ռաջադէմն նկրտի»։

Ս. Գրիգոր Լուսաւորիչ.

(Յաճախ. էջ. 148)։

Յառաջադէմ, յառաջադիմութիւն, յառաջադիմել—քա՜նի գեղեցիկ խօսքեր են, քա՜նի գրաւիչ են թւում լսողի ականջում տասն և վեց դար շարունակ հնչուել է այդ խօսքը։ Հայաստանեայց եկեղեցու հիմնադրութեան և զարգացման դարերից սկսեալ, հնչուել է և կհնչուի յաւիտեան՝ մնալով միշտ թարմ և հրապուրիչ։ Եւ ինչո՞ւ չպէտք է թարմ մնայ կամ ինչո՞ւ պէտք է կորցնէ իւր հրապոյրն, երբ յառաջադիմութիւն՝ նշանակում է ապրել իբրև բանական էակ։ չյառաջադիմել՝ նոյն է թէ մեռ-

նել իւր մարդկայնութիւնը...։ Ո՛հ քաղցր է ապրելն, եթէ միայն այդ ապրուստը, կեանքը՝ յառաջադիմութիւն է։ Նա չի ունենալ բանական կեանքի քաղցրութիւն, ով չունի կեանքի այդ երակն, ով չէ հասկանում իւր բանականութեան՝ իւր հոգու՝ աստուածայնութիւնն. այդպիսին մեռնում է, առանց մնհանալու միանգամայն։ Սակայն կեանքի քաղցրութիւնը վայելելու համար հարկաւոր է աչք ունենալ, բանականութեան տէր լինել յառաջադիմութիւնը նկատելու. պէտք է ինքնահաճութիւնից հեռու լինել անցեալն ու ներկան առանց կողմնապահութեան դիտելու, սեպհական անձը քննադատելու՝ թէ որքան ինքն համապատասխանում է իւր աստուածայնութեան, արդեօք դաւաճան չէ՞ եղել հասարակական յարաբերութեանց սրբութեան դէմ, գրուժան չէ՞ եղել իւր վայելուչ սկզբունքների նկատմամբ, դաժան չէ՞ եղել կեանքի ճշմարտութեան խաղաղութեան վերաբերմամբ։ Բայց դորա համար անհրաժեշտ է յուշարար. Նոր-Տարին լինի մեզ յուշարար—ճշմարտութեան խթան, ստութեան խորտակիչ։ Նա կարող է, այո՛, յուշարար լինել, սակայն միայն նոցա համար, որոնք մոռացել գիտեն, որոնք հասկանում են իւրեանց էութեան բարձրութիւնն, իւրեանց արժանիքն և համոզուած են՝ որ իւրեանց վատ լինելու պատճառն ինքեանք են, իւրեանց սխալ քայլի համար դէպի անկումն կգնան, մտքի, զգացմունքի, կամքի, այսինքն հոգու սուզմամբ գրաստականի մէջ։

Ա՛յդ՝ Նոր-Տարին մեզ յուշարար։

Նոր-Տարին մեզ յուշարար։ Ցիշենք մեր անցեալը. դիտենք և մեր ներկան։ Ի՞նչ էինք և ի՞նչ դարձանք. ի՞նչ ունէինք և ի՞նչ ունինք. ի՞նչ էինք գտել և ի՞նչ կորցրինք։ Հարցեր, հարցեր. բայց կայ մէկն որ պատասխան տայ. կասէ՞ ունեցողը թէ ինչ չունի այլ ևս, կասէ գտնողը թէ ի՞նչ է կորցրել ցայժմ։ բայց ո՞վ է յուսացողը թէ բան պիտի գտնէ. և կյո՞ւսայ նա որ գայթ ի գայթ է գնում սայթաք քարի վրայ։

Զպահողին պիտի դատապարտե՞ս. կորցնողին պիտի յանդիմանե՞ս։ Քա՜ւ լիցի. նա ինքն պիտի ինքեան դատապարտէ. նա ինքն պիտի իւր առաջ ամաչէ, եթէ բանական էակ է։ Դատապար-

տուած է կորցնողը, դատապարտուած է և պահանջողն. ապառաժի վրայ սերմն չեն ցանում, ծծան հողի վրայ ջուր չեն թափում: գանձը չեն ժողովում «ի ծրարս ծակոտեալս»: Վասնորոյ «հայեաց յանձն քո, ի քեզ ինքն հայեաց, զքեզ ծանիր, ուստի ոչ գոյ այլ ինչ մեծութիւն քան զծանօթութիւն անձին»:

Վճարել ես պարտիքդ որ հասարակութիւնը դրել է վրադ, գործադրել ես քանքարդ, որ տուել է քեզ Աստուած. ջանացել ես պահել արժանիքդ, որ վայել է պատկերիդ, գործել ես ըստ կարեացդ, գոյութեան իրաւունք ունենալու, ձգտել ես իդէալիդ:

Ահա՝ յուշ, քեզ յուշ՝ Նոր-Տարին:

Բայց մի վհատիր, վհատելովդ ուղղուէ: Նոր-Տարին քեզ այդ է յիշեցնում: Անձին փորձաքարը ձեռքից չպէտք է տալ: Vitae, non scholae, discendum est—կեանքի և ոչ թէ դպրոցի համար պէտք է սովորել, ասում է առածը. նոյն իսկ կեանքը մեզ ուսուցանում է, ուսանելով պէտք է ուսուցանենք: Նա որ ամեն ժամ չէ սովորում, նա է որ իւր պատուին արժանի չէ. նա որ շարունակ չէ խրատւում, նա է որ չէ յառաջադիմում: Վասնորոյ դիտենք մեր անցեալ կեանքը, հասկանանք ազգի պատմութիւնն, որպէսզի բարոյական իրաւունք ունենանք նորա պաշտօնը վարելու, նախապէս մեր ոյժերը պաշտօնի պահանջման հետ չափելով:

Անցեալի վրայ կնայենք, նայելով կնայենք. ահա պահանջը հասարակութեան՝ գոչում է աջ ու ձախ. «եկեղեցի, դպրոց, տուր մարդիկ, տուր դաստիարակներ, տուր հասարակական բնաւորութիւններ, բարոյական անձնաւորութիւններ, երկիւղած հոգիներ, ժողովուրդը կրթութեան կարօտ է»: Բայց գիտե՞ս որ դոքա պիտի տան ամենքի ուզածը, պահանջածը: Այո դոքա պիտի տան, կվկայէ հասարակութեան ինքնագատութիւնը: Բարոյական սկզբունքը, բարոյականութեան հիմնաքարը պիտի լինի ձեր հաստատութեան վեմը: Զունեցար սկզբունք, որ քեզ համար վեր լինի ամենայն ատելութիւնից և թշնամութիւնից, չունեցար գաղափար՝ որ քեզ «գօտի ճշմարտութեան» ծառայէ, գոնէ ունեցիր այդ գիտաստութիւնն, որպէս զի արդարացի լինի պահանջը,

և ընդունակ լինի պահանջողը։ Կտան քեզ՝ եթէ կարես պահանջել և ընդունակ լինես ստանալու, եթէ կարողութեանդ ձայնը լսեցնես։

Նոր-Տարուայ ձայնը մեզ յուշարար։

Նա շատ բան կյիշեցնէր, բայց բաւական է. թող նա իւրաքանչիւրին առանձնապէս յիշեցնէ։ Գիտասա լինել գործածին և գործելուն, ճշմարտութիւնը գոյութիւնից վեր դասել—այդ լինի նորա բերածն. ինչ էինք և ինչ դարձանք, մեզ զբաղեցնող հարցը լինի մեր սրտում գահաւորուած։ Ուրեմն ձգտենք առ Աստուած և Աստուծոյ հետ մուտք գործենք Նոր-Տարուայ մէջ։

Հայ մարդ, Հայ ազգ, Ս. Էջմիածինը քեզ զօրութիւն է մաղթում առ այդ. Միածնի Իջման սրբարանը սրբութեան օրհնութիւն է առաքում, շնորհաւորում է քո նոր կեանքը, Լուսաւորչեան սուրբ ողջոյններով։